



**ԲԱԺԵՆԳԻՆ**  
 Մ. ՆԱՀԱՆԳՈՒՑ ՀԱՄԱՐ  
 Տարեկան \$ 1.50  
 Վեցամսեայ 0.85  
 ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՄԱՐ  
 Տարեկան 10 փրանք  
 ԿԱՆՈՒԿ ՎՃԱՐՆԵԼԻ  
 Խմբագրութեան գրկուած նամակ կամ ծրար ետ չեն վերադարձուիր:  
 ԳԻՆ 3 ՍԷՆՏ:



# ՊԱՅՆ

## Հայրենեաց



**VENISE**  
 HAIRENIAZE  
 AN ARMENIAN WEEKLY.

ՀԱՍՏԷ  
 AMERICAN HAI PUBLISHING Co  
 209E. 23dSt., New York City.

Entered at the Post Office at New York as Second-Class Mail Matter

Subscription \$1.50 a Year.

ՇԱՐՈՒԹԱԾԵՐԻՓ

### ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

**ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ**

Մեր Որբերը — Օգնութիւն Հայ որբիկներուն . — Նամակ Պաշտնէն . — Փոքրիկ բացատրութիւն մը . — Սմբա տի նահատակութիւն (ոտանաւոր թարգ.) — Աղբային Գրանիկ . — Բաւաքական . — Ներքին Լուրեր . — Բանասիրական (Կիրակին Ուրֆայի մէջ):

**ԽՄԲԱԳՐՈՒԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ**

Մեր բոլոր գործակալներէն, բաժանորդներէն, բաժանորդ գրուել ուղղուներէն, ծանուցումի արժէքը զրկողներէն կը խնդրուի որ դրամ պարտենակոսը ու դրամի վերաբերեալ ամեն նամակ զրկեն առ՝

M. S. Sourenian,  
 343 E. 34th St., New York City.

**ՄԵՐ ՈՐԲԵՐԸ**

Եթէ տարիներու, դարերու ընթացքի մէջ եղբր է որ մը, որ մեր սիրտը արիւն խոցող խշխշուքի ենթարկուեր է, այդ տարիներու ամենէն սահմակող, ամենէն սրտակէզներէն մի քանին այս վերջի շորս Հինգ տարիներն են: Ամեն անգամ որ մեր յիշողութեան մէջ կ'արթննայ մեր որբերու գոյութիւնը, անհամար անբացատրելի հոգեկան սարսուռի կենթարկուինք, զազանութիւնն ու բարբարոսութիւնն են որ մեր առջև կը պատկերանան՝ իրենց ամեն կարգի նախնիներով:

Որբ մնալ՝ բնական է, սակայն սեբունը մը որբացել՝ սոսկալի. և ահա թէ ինչո՞ւ Մեծ Մարգասպանը իր սուր ժանիքներով իրրե մղձաւանջի սուրուան կան մը կուգայ ու կանցնի մեր առջևէն, բզկտող ու արիւնքերան:

Չգալը և գրգռուիլը սակայն մեր վայրկենական ապարտութիւններու արդիւնքն են, որոնք մեր մէջ ծագում կառնեն առժամայէն և իր մէջն ալ կրնան մեռնիլ յաճախ:

Հանրային ազգաները, որոնցմէ Հայ ազգը որբացաւ, մեր զգայնութիւնները զրգռելէ և վրէժխնդրութեան ոգևոլ վառելէ անդին՝ աւելի կարեւոր, աւելի կենսական մղում մը պէտք է յառա ցեն մեր մէջ — մեր որբերը պահելու և պէտք եղածին պէս խնամելու մղումը:

Սերնդական ակախանութիւնը անասնական աշխարհին մէջ ընազդի մղումով միայն կը յառաջանայ, իսկ բանական աշխարհին մէջ թէ՛ ընազդով և թէ՛ գիտակից միտումներով: Ու Հայ ազգը, որ կը բռնադատուի ամբողջութեամբ ջնջուելու պարբերական դառն ու անխիղճ արածանքին ենթարկուել, իր մէջ ամենա-

բուն կերպով պէտք է արթննայ իր սուզմի գոյութեան պահպանումը ապահովելու խնդիրը: Եւ այսօր ի՞նչ ունինք աւելի մեծ վէրք մը դարձանելու՝ քան մեր որբերը: Անոնք մեր ամենաթարմ մտաղ միտն ու ոսկոր երն են. կանքը մենէ խոյս առնող անոնց կը փոխանցուի որովհետեւ անոնք Հայութեան կենսական մասն են, անոնք ապագայի Հայութիւնն են ու անոնցմով է որ Հայ ազգի գոյութեան շղթայի օղակները պիտի կազմուին: Եւ երբ, ըլլա՛յ մայր երկրի մէջ, ըլլա՛յ արտասահմանի մէջ, մենք ազգային կեանքի խորտումները ցոյց կուտանք, ու իրրե ուրոյն ազգ մը ազատ ապրելու տեսիլը կուենանք և դէպի հեռու կը նայինք անորոշ և սակայն յուսալի սինկալութիւններով, Հայ որբերը յէգէօններով կը շարունակեն ներկայէն ապագան անցնելու թ' մ' ին վրայ: Իբրև մարդ՝ կապրին և Իրնան ապրիլ անոնք, բայց մենք կուգնք որ աւելի իբրև Հայ ապրին: Տակաւին պատմութիւնը մեր իսկաւ ջնջումի վճիռը չէ տուած և չի ալ կրնար տալ, քանի մենք միահամուռ ու ժի համախմբուածով մը մեր ազգութեան ետ պահպանելու և անոր գոյութիւնը ապահովելու ոգին ու բարոյական տո՛ ու՛ թիւնը ցոյց կուտանք և ի սկզբնէն անտի դերմարդկային զօրութեամբ մը անհնարին կարծուածին դէմ մաքառելով դէպի քաղաքակրթութիւն, դ' պի գարգայումն և դէպի ազատութիւն ձգտելու կ'րովը կըզգանք ու կը պահնք մեր մէջ: Այ կուտանք ու Համոզումը պէտք է արմատանան մեր մէջ թէ՛ կեղակարծ թշուառութիւնները, որոնք պարբերաբար մեր վրայ եկան և քաղաքակրթի կոշուած Եւրոպային շնական (cinique) անտարբերութեան շնորհով Հայ ազգը որբացուցին, կրնանք անոնցմէ իւրաքանչիւրը ամբողջ աստիճան առ աստիճան, իւրաքանչիւրն իր կարգին: Մեր թշուառութիւններէն ամենէն առաջնակարգը մեր որբերը պատասպանելու խնդիրն է: Իրաւ է, որ օտար երկրներէ բարեսիրտ ձեռքեր ժամանակին օգնութեան հասան մեզ: Մենք մեր կողմէ անոնց քաջաբարձ գնահատելով հանդերձ՝ միւս կողմէ պէտք է ձեռնածալ նըստինք ու խնամքի գործը ամբողջութեամբ առնք ձեռքն յանձնենք: Օտարն ինչքան ալ բարեսիրտ, ինչքան ալ գութագութանք ու անոնց մեր վրայ, իր գութագութանքն ու բարեսիրտութիւնը Հայ չեն և ուրիշ բան իրաւունք չունինք սինկալելու անոնցմէ: Անոնք մեր որբերու միտքն ու հոգին ու անոր իմացական ամեն կարողութիւնները չեն կրնար զարգացնել այնպէս, ինչպէս Հայութիւնը կը պահանջէ: Բացի այդ, անոնցմէ, ասանք զնացած են մեզ քրիստոնեան եր շինելու (?), մեր հոգւոյ փրկութեան գործը ապահովելու (!) և միշտ իսկ մեր



ԴԵՐՁԱԿ ՀԱՅ ՈՐԲԵՐԸ ԿԻՊՐՈՍԻ ՈՐԲԱՆՈՑԻՆ ՄԷՋ

ազգաները շահագործել և: Մենք քրիստոնեայ ենք արգէն: Հայութիւնը իր դարաւոր մարտիրոսութեամբ ամբողջ քրիստոնեայ աշխարհին հետ կարող է մրցիլ, ան մեր միակ պարծանքն է արգէն: Բազմաշարժար, նահ սակ, մարտիրոս և այլ ամակոնքի, որոնք աւետարանի հետևողներուն կը արուէին քրիստոնէութեան նախնական դարերուն մէջ, հազար հինգ հարիւր տարիէ ի վեր Հայ ազգը այդ ստորագիւղները իրեն սեփականացուցած է գրեթէ: Ու եթէ Հանդերձ անհալին մէջ փրկութեան առաջին մրցանակին արժանի մէկը կայ, ան ապահովաբար Հայ ազգն է, որովհետեւ ոչ մէկ ազգ կրնայ այնքան ազնուալի տարեգրութիւն մը ունենալ կենաց գրքին մէջ, ի՛նչ որ մենք ունինք:

Մենք կուգնք քրիստոնէական կրթութեան հետ համընթաց ազգային, Հայ կրթութեամբ մեծցնել մեր որբերը: Թող օտարները իրենց քաղաքակրթութեան բարիքներով օժտեն զանոնք, թող գիտութեան և ուսման ամեն մէկ ճիւղովը զորագանեն անոնց միտքը, թող գանոնք քաղաքակրթ մարդ շինեն. իսկ մ'նք այդ ամենուն վրայ դենք և պէտք է դենք Հայ Ազգ ու թ' և ան կնիքը, որովհետեւ անոնք Հայ որբ են ու Հայութիւնը մենք ենք:

**ՍՈՒՐԷՆ**

Ամերիկայի Հայ Հրատարակչական Ընկերութեան հետ յարաբերել ուզողները կամ անդամակցիլ ցանկացողները դիմելու են Վարչութեան Ատենապետին, հետևեալ հասցեով:

ARMENIAN PUBLISHING CO. OF U.S.A.  
 P. O. B. 1035,  
 Providence, R. I.

**ՕԳՆՈՒԹԻՒՆ ՀԱՅ ՈՐԲԻԿՆԵՐՈՒՆ**

Ի նպատակ Հայ Որբիկներուն «Բազմավէպ» բացատրիկ պրակ մը կը հրատարակէ: Թերթին երկայնութիւնն է 42 հարբերորդամեդր, լայնք 30 հրդմ: Թերթը կը բաղկանայ 40 էջերէ, և ամեն էջ երեք լայն սիւնակներու բաժնուած է: Թուղթը հաստ, ողորկ, փայլուն ու շատ ընտիր: Կը պարունակէ ժողովրդեան ուշաքրաւ, հետաքրքրական եւ օգտակար յօդուածներ:

«Բազմավէպ» այս բացատրիկ լայնածաւալ մեծ թերթը կը հրատարակուի իրրե անդրանիկ «ՀԱՅ ՊԱՏԻՍԻՍՏԱՐԻ ԹԵՐԹ» մը, Illustration Armenienne, նման եւրոպական մեծ ազգայնաբանական պատկերազարդ թերթերու:

Կը սպուի մի քանի հազար և ստակը պիտի յատկացուի Հայ որբանոցներուն:

Գինն է կանխիկ 2,50 Փր. 1 րբ. 50 սնթ: Այս ծանուցագրով կը հրաւիրենք մերագնեայ այն ամեն ազնիւ ու գթած անձնուորութիւնները, որ բաժանորդագրուելով այս բացատրիկ պրակին, համեստ լուծայ մը բարեհաճին ձգելու Հայ որբիկներու գանձանակին մէջ:

Բաժանորդագրաց անունն, և ով որ այս նպատակաւ որբիկներուն օգնութեան պիտի հասնի, հաւաքուած գումարը եւ որչափ պիտի յատկացուի իւրաքանչիւր որբանոցներու, պիտի տպուին «Բազմավէպ» պրակներուն մէջ:

Այս բացատրիկ թերթին մէջ կը տպուին նաև ծանուցումներ, մէկ սողի գինն է 25 սանդիմ. փոփաքողք փութան յղել իրենց ծանուցումները:

Մեր հասցէն է՝  
 Re'daction de la Revue "PAZMAVEB"  
 (St Lazare) VENISE (Italie)

Շնորհակալութեամբ ստացանք «Պատկերազարդ Բնաշխարհիկ Բառարան»-ի առաջին պրակը, ընտիր աշխատասիրութիւն Հ. Ս. Էփրիկեանի, ապագրութիւն Վենետիկ Ս. Ղազար. իւրաքանչիւր պրակի գինը 2,50 Փրանք 50 սնթ:

Այս պրակի մատենախօսականը կը դնենք «Չայն Հարենեաց»-ի յառաջիկայ թիւերէն միտն մէջ:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Ն՝ ՄԱԿ ՊԱԼԲԱՆԷՆ (1)

21 Սեպտ. Պ...

ԱՊԱԿԵԴՐՈՆԱՑՈՒՄԻ ԱՐԴԻՒՆՔԵՐ

Իրավաբանականներու ծրագրեր կը կազմակերպուին: Օրը օրին կատարուած քսամեկ իրողութիւնները ցոյց կուտան թէ այս վեհագործական բարձրութեան հասած կուսակցութիւնը դատաւարաբարուած ողորակի կացութեան մը մասնունելի և իր անկումին մէջ շարունակ հասած արդար աւելութեանը ենթարկուելի: Ի՞նչ է պատճառը, որ ուղղակի կրնանք յայտարարել թէ տարիներու ընթացքին մէջ անդի ունեցած անհեռատեսութիւնն ու շահագրգռեցողութիւնն էր: Անարգել ինչ որ իր յառաջխաղացման կարող էր զօրավիզը ըլլալ, հարմար էր զեղծումներու հանդէպ ամեն բողոքող, խղիւղ իրաւունքի և արդարութեան ձայնը, և կարծելով որ յաղթութիւնը տարած էր, ո՛չ իր շուրջը նայեցաւ, ո՛չ ալ իր ետին:

Խնդը Դաշնակցութիւն, վարկեան մ'աշքերդ Պուկարա՛ւն այս աղտոտ երկրին վրայ դարձնէր: Նայէ՛ք քանի՛ յուսալի սրտեր խորտակեցիր, ի՞նչ յուսահատութեանը սեպարաններ բացիր ներկայ սերունդի առջին: Ո՞րն են այն իրենտուրայց միտնումայն քեզի համար գեղածիծաղ եղող օրեր... ախոս՛ս, անգարձ կերպով կորսուած են յուսահատութիւնը: Ու այսօր, սարսուռի բան, ահա՛ քո

(1) Ինչպէս նամակին թուականը ցոյց կուտայ, բաւական ստան տալ ընտանացած էինք ներկայ թղթակցութիւնը, առաջին պատահութեամբ չը հրատարակեցինք՝ թիւրիմացութիւն մը համարելով: Թէ և վստահ էինք մեր թղթակցի մեղովութեան, բայց քիչ մը ուրիշ նամակներ և վստահելի անձնաւորութիւններ դժբաղդարար կը հաստատեն կատարուած իրողութիւնը, որը՝ ինչպէս նաև քաջութիւն ունեցած էր հրատարակել վստահելի անձնաւորութիւններ դժբաղդարար կը հաստատեն կատարուած իրողութիւնը, որը՝ ինչպէս նաև քաջութիւն ունեցած էր հրատարակել վստահելի անձնաւորութիւններ: «Դատնութիւն» համարած էր զայն, բայց այժմ ժողովուրդը շատ լաւ հասկնցած է այդ լրագրի լեզվի լեզված «մատնութիւն և «մատնիչ» բառերուն նշանակութիւնը:

ԽՄԲ.

Բ Ա Ն Ա Ս Ի Բ Ա Կ Ա Ն

ԿԻՐԻԱԿԻՆ ՈՒՐՅԱՍԵՒ ՄԷՋ

«Քօնկրիկէյընը Ուըր» թիւերը Ե. զետիս գործող օրերը Ֆիորինա Շաթըրքի նամակներէն հետեւեալ հետաքրքրական քաղաքականները կընէ:

Որչա՛մ կը փոփոքէի, որ կարող ըլլայիք ընդունելութիւն մը ընել ձեզ մեր այս հաստատութեան մէջ և ցոյց տալ մեր 70 մանչ և 56 տղջիկ որբերը: Թողէ՛ք ձեզ պատմեմ թէ ինչպէս կանցնեն մեր այս պարտիները իւրաքանչիւր կիւրակի իրիկուն: Անշուշտ անոնք կիւրակիօրեայ զգեստ հագած կըլլան, պատմուճան մը, որ առաջին կը բացուի և իրարու վրայ ծալուելով՝ գոցուած ներքեւնաշրջազգեստի մը ձեւ կուտայ, վրան պարզ գօտի մը կը կապեն և բրդեայ կարճ վերաբլու մը կը հագնին, որ մեր տունը մնացող տղայոց երեկոյթ կուտայ: Ամենքըն ալ միմեծ են՝ բացի վեց եօթ հաս տարիքոտներէն, որոնք իրական վերարկուներ ունին: Մի քանիները ճիշդ հիմա իրենց լիլուճ համար քէսեր ընդունելցին իր վարձատրութիւն իրենց գոցարտատանութիւններուն, որ շարաթ իրիկունները կընեն: Այս նուէրները մասնաորակալ գոհացուցիչ են անոր համար, որ այս տղաները աւելի թմրած էին և որոնք հիմա զգաստանալով վե-

րորդ անկեալ Կօմիտէները երևան կուգան կը մերկանան իրենց բովանդակ գեղծութիւնը մէջ: Կը թողում խղճի տէր հայրենասէրներու, որ զանազան քաղաքներէն իրենք ալ փութան Հայրենիքի ու Յեղափոխութեան անունը շահատակող անձնաւորութիւնները հրատարակուած մատնանք ընել: Ես միայն պարտք կը համարիմ՝ անզոյս Կօմիտէի գործունէութիւնը քննել և յակնէ՛ անուանէ՛ ցոյց տալ քանի՛ մը Մեծ-Պաշտօնագողները:

Մի՛ վար անա՛ւ, ո՛վ Դաշնակցութիւն, մի՛ ստուար երբոր ըսեմ թէ այս Մեծ-Պաշտօնագողները քո ծոցիդ մէջ սընուցիր, և քո աշխարհ առելը կատարուեցան ամեն բան Դուն և քո Պաշտօնեան կեդրոնական Կօմիտէի լիազօր ներկայացուցիչը գիտէիք թէ հոս, Պ. Ի. Ման աննշան քաղաքի մը մէջ, ԲՍԱՆ ՈՒԹՐ ՍԵՏՈՒԿ հրացան, փամփուռ և անա ուրիշ զէնքեր կային, որոնք ժողովուրդի դառն քրտինքով յառաջ եկած էին՝ գիտէիք թէ աւելի քան երեք տարիներէ իվել հրացան սեղիս Կօմիտէի տրամադրութեան ներքե կը մնային, ինչո՞ւ համար ապի՛ր ուրիշ տեղ մը չը փոխադրեցիք և կամ Սէ ասոնց վերին հսկողութեան պաշտօնը լիովին չը կատարեցիք:

Եթէ կազմակերպուած էր Կօմիտէն, ինչո՞ւ համար պարոն ներկայացուցիչը չէր ստանձնեք ըստ գործառնութիւնն ու հաշուարկն ամբողջ համարատեսութիւնը: Վստահայի մէջ թերթ հրատարակելով ազգին վէրքերու վրայ սպեղանի պիտի դնէր, եթէ ոչ՝ անձնական նկատմանն ունէր, որոնք կը հարկադրէին զինքը լուսթեան դատաւարութիւնը: Ու այսպէս, երբ որ քո լիազօր ներկայացուցիչը կը լռէր, անզոյս կազմակերպուած Կօմիտէի երեք անդամները զէնքերն անուրդի կը հանեն, չը նայելով որ այդ զէնքերու բերնէն արեան կաթիլներ կը վազէին:

Այս, մէկ տարուան մէջ քան ուր ընտանիքն ապիւն մտան և վրայէն ելան ամեն բան վերջացած էր: Հիմակ կը մնար յուսահատութիւն իրենց մտատանջութիւն պատճառող հարցը փակելու միջոց մը խորհել: Ահա՛ ստոր ալ առիթն ինքնին ներկայացաւ: Անդամներէն մին, Կ. Մ., իր առևտրական ասպարէզին մէջ ահազին կորուստ մը տեսնելով՝ կըստիպուէր ուղղակի Ռուսական փախչիլ: Կօմիտէին Աստանայեցիք Յ. Փ. Կատարուելով թէ զէնքերը նոյն անձն է ծախած զազտնապէս, Դաշնակցութեան Արեմտեան Պիւնոյն կը տեղեկագրէ: Աքանջելի՛ մաստ-

րահատու կըլլան թէ իրենք ալ այնքան կարողութիւն ունին՝ որքան իրենք ընկերները: Այն սղաքները, որոնք մասնաորակալ կորցուած էին այս ետ մնացող տղաներուն օգնելու համար, հիմա անոնց վրայ կը նային իսկական հպարտութեամբ մը:

Ճաշէն վերջ (կիրակնօրերը միշտ բերնի փրկու) երբ սնակ լուացողները ազատ են, զանգալը կը զարնուի և անոնք իրենց «մեծ օր» կամ «ընտանիքի սենեակին» մէջ կը հաւաքուին և իւրաքանչիւրը իրեն յատուկ շարքին մէջ կը նըստար: Մենք անոնց հանդիպակաց կողմը կը նստինք, ամենափոքրիկները ճիշդ մեր առջև և երեք կամ չորս հասերէն մին՝ որոնք տակաւին շատ պզտիկ են, ծուռ գլու վրայ կը նստեցնեն, որպէս զի յարմարութիւն ունենայ տեսնելու օրիորդ Մ. զ, որ փոքրիկներու օրկանը կամէ:

Անտրի ամանը իր վրայ խուփ մը ունի՝ ազատութեան համար, սակայն և այնպէս փոքրիկ շարածճի մատներ երեքն կը փորձուին ունելին աննել և կերակրին հետ խաղալ:

Կերպէնք այն երգերը, որոցմէ արդաքները կախովին: մեծերը մէկ կամ երկու եղանակներու թէնօրը սորոված են և կարծես իւրաքանչիւրն իր կողմէ կը ջանայ իր անկատար ձայնով առանց ընդմիջումի պատերազմ մը շահիլ:

Բիշ վերջ փոքրիկները կոսկին մրափել և մենք կը հասկնանք թէ աղօթքի ժամանակ է, որմէ ետքը մեծերը դաս

ծում: Հետևաբար բոլորովին հանգարտ ու անխռով ժամանակ մը կ'անցուեն:

Այդ տեղեկագրերը զրկեցի առանց պատասխանի կը մնայ եղեր, ըստ յայտարարութեան Պրն. Ատենապետին, աւելի քան չորս ամիսներ: Իայց գաղտնիքը հրատարակի վրայ նետուելէ ետք, անմիջապէս վստահայի լիազօրին հեռագրուեցաւ որ քննութեան գար: Պարտնը մերժեց, առարկելով որ ատանկ բաներէ չէր հասկնար, մինչ ժողովուրդը յազուած վիճակի մէջ կը սպասէր որ այս քստմեկի սճիրը բոլորովին մերկանար:

Ամիս մըն ալ սահեցաւ: Ահա՛ առաւօտ մը լսեցինք որ Դաշնակցութեան քննիչ մը եկած է մասնաորակալ «Ճըմարտութիւն» երևան հանելու համար: Ուշի ուշի հետեցանք Պարոն հարցաքննիչի կատարած ըստ գործառնութեանց: Մէկ խօսքով, առջի օրէն իսկ հասկցանք թէ «Ճըմարտութիւն» չէր որ կը փնտաւէր, այլ միջոց մ'որով կարելի ըլլար ծածկուել ամբողջ ոճիրը, մոռցնել տալ Եղափոխութեան անունն արտաստորող այս մեղաւարտ զեղծում և վերջացնել ամեն բան... «Ամենայն ինչ եղել, կատարուել է, պարաններ, ի՞նչ էք ուզում ասել, առարկեց հաստատական եղանակով մը, էլ չենք կարողանում մի որոշ բան անել: Ձեզ է մնում ծածկուել (?) այս տեսակ եղեկներ ինչու... դրանք յայտնելու բաներ չեն ո՛չ ժողովուրդին եւ ո՛չ էլ ուրիշներին...»

Այս եզու Պարոն Գինիլի վճռական խօսքը: Հապա՞ քան ուր մտուկ զէնքերը, որոնք մօտաւորապէս 1200 սակիլ արժողութիւն ունէին, ո՛վ պիտի վճարէ ասոնց հատուցումը, — ո՛չ ոք: Գուցէ ասիկա անանկ աննշան զեղծում մըն էր, որուն նշանակութիւն տալն անգամ յիմարական գաղափար մը պիտի ըլլար:

Արդ, երկու օրէն ետքը մեկնեցաւ: Ատենապետը գեղեցիկ գերին մէջ բաւական յաջողութիւն ցոյց տուած էր: Հիմակ ալ վստահ էր թէ ժողովրդական արդար զայրոյթին չպիտի հանդիպէր և իր դէմ նետուած սպառնալիքներու առջին շի պիտի դողար:

Եթէ Դաշնակցութիւնը լռէ այս քստմեկի խաչազողութեան հանդէպ, գիտցած ըլլալու է որ իր դէմ պիտի գտնուի իր ճակի քրտինքը նուիրող ժողովուրդ մը, որ հատուցում պիտի պահանջէ՝ վրէժ փոխելու թեմա արդար զայրոյթով:

ՇԱՆԹ

ՓՈՒՐԻԿԻ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ ՄԸ

«Ձայն Հայրենեաց»-ի 15րդ թիւի մէջ Բրովիսէնայի Հայ Նուագազուգ խմբի վրայ երգած անգղեկութեանց մասին կուզէի նկատողութիւն մը ընել, ճշմարտութիւն երևան բերելու համար:

Բրովիսէնայի Հ. Ն. Խմբի յառաջիմութեան փոփոքող ըլլալու և իրենց ինչպետան անձնակազմը գործելու ծանօթ է բոլոր անոնց, որոնք տեսան զիս նիւ Յօրքի փողոցները Հայ խանութի խանութ ճաշարանէ ճաշարան պատերա՛ ստմակ ծախելու համար, և հանդիսին իրիկունն ալ որպիսի խոստովանութեամբ եւ յաջնութեամբ հաջիւնելու առնելու:

Քանի ամերիկացիներ դուրս հանուեցան այդ երկոյ՝ անստմակ ներս մտնելուն համար. միայն § 3.50-ի տոմարով ծախեցինք ներս մտնող տեղացիներու: Արդ, Բրովիսէնայի Հ. Ն. Խմբիին հրամանով իր երկեց տուած նուագահանդէսի Գինիլի կուգամ յայտարարել թէ Պ. Յ. Սարկապետին, որոնց յանձնած էր ստմակներն ծախուելու համար՝ և ցանկը կը զրկեմ «Ձայն Հայրենեաց»-ի խմբագրութեան ի հրատարակութիւն (1), որպէսզի տեսնուի թէ լուստարականի և բողոքականի զանազանութիւն կար խնդրոյն մէջ:

Գրովի Բ. Հ. Ն. Խմբիին անդամներուն, անոնք դատաւարութեամբ խառնելու, իսկ ազգով ու սրտով Հայ, իսկ խմբի հիմնադիր և Գործադիր Յանձնարումը եղած է միայն Պ. Յ. Սարկապետին:

Ուրպիսի եմ նաև յայտարարելու թէ Բ. Ն. Խմբիին համակործակուած առատածան նուէրներովը նուագահանդէսը իր բոլոր ծախքերը գոցած է, և այժմ Խմբի գոհ սրտով կը շարունակէ իր սիրած ճիւղին մէջ յառաջադիմելու, թէ և մեր երիտասարդները զրամի կորուստէն չեն վիսնար, քաղ ու սովորեն են ամեն ճշմարտութեանց յաղթելու:

Արդ, վերջացնելով իտեղս, իմ շընորհակալութիւնս կը յայտնեմ նիւ Յօրքի սպանական ու զարգացած Հայ դասակարգին, որոնք իրենց ներկայութեամբ պատուեցին նուագահանդէսը:

Ի Դիմաց Բ. Ն. Խմբին ՏԻ. ՍԱՐԿԱՍԱՐԿԱՆ

(1) Այդ ցանկը աւելորդ կը համարենք հրատարակել. միայն սա շափը քանի որ ցանկին մէջ յիշուած երկու խմբագրութիւնները, ինչպէս նաև Պ. Ա. Թագաբեան ստմակ չեն ստացած ծախելու համար:

ԽՄԲ.

Բաւկը մտնելով: Եկեցեալս մէջ շատ հետաքրքրական կիրակնօրեայ վարձարան մը ունեցի, որ սովորաբար 9505 աւելի անձներ ներկայ կըլլան: 29 ուսուցիչներէ շատերը հինգշաբթի կէսօրէն վերջ երբ զարոցները կը գոցուին՝ իմ քով կը մնան կիրակնօրեայ դասը պատարասելու:

1000 կին և աղջիկներ աշխատանքին մէջ մեր հրամանատարութեան տակ կը գտնուին. 1700էն աւելի աշակերտներ ունեցի մեր գաղտնիքներուն մէջ 27 ուսուցիչներով: Աստուած բացարձակապէս ներդրած էր վրայ է ասոնց սրտերուն մէջ և մենք իրեն գործակից ըլլալու առանձնաշնորհութիւնն ունինք:

Չարի նուագութեան խիստ շատ ներգուեցանք: Տղաները բաւական հեռաւորութենէ մը զժուարտութեամբ ջուր կրցին, անոնցմէ 25ը օրը շորս գոյլ ջուր բերելով, և միայն էլ մը կը պահելք այս վերջերս: Ձմեռուան եղանակին մէջ երկու կենդանիներ կը պահէինք և մարդ մ'այ մասնաորակալ այս գործին համար: Ճիշդ հաշիւ ընելով դասը թէ միայն այս տարուան մէջ սոսկ ջուրի համար 15 թուրքական լիրա ծախսած էինք: այսու ամենայնու միայն կէս մասը կրցանք պահել տղաները: Հիմա սակայն լուր հասաւ ինձ թէ բարեկամներու բարեսիրտութեան շնորհով մեզ համար Հոբ մը պիտի փոքուի և այսպիսով մեծ նպաստ մը պիտի լրացուի: Այս բանիս համար շատ շնորհակալ ենք:

Մեծ հաճութեամբ ներքև կը գետնա- շինէր Պ. Միհրան Տամատեանի մէկ բա- նաստեղծութեան Անգլիերէն թարգմա- նութիւնը, զոր Օրիորդ Ալիս Լուսին Պը- լաբուէլ ինքը թարգմանելով մեզ դրկած է հետեւեալ նամակով:

«Ձայն Հայրենեաց»-ի Խմբագրութեան Յարգելի Տէր:

Եթէ հաճիք ձեր թերթին մէջ տակը Միհրան Տամատեանի ոտանավորներէն միայն թարգմանութիւնը, որ կը ներփա- կեմ, ուրախութեամբ զայն ձեզ իբր նուէր մը ընծայած պիտի ըլլամ:

Երբ հրատարակէք, հաճեցէք զայն պարունակող թերթէն տասնհինգ շաբ- ազարկել ինձ:

Ձերդ ևն. ԱԼԻՍ ԼՍԹՕՆ ՊԼԱԲՈՒԷԼ

THE LAMENT OF MARTYRED SUMPAD'S MOTHER.

From the Armenian of Mihran Damadian.

(Sumpad was a youth of Alashgerd, who had just finished his studies at the school in Erzroum, and was on his way to village of Pakarich as a teacher, in 1888. At Erzinjan he was subjected to a strict examination, and the authorities found among his composition, a poem headed "Warning to the nation" one line of which read, "The Turk is as wild as a wild cedar-tree." They arrested not only Sumpad but his teacher, Mr. A. Seklemian. After being imprisoned for a few weeks at Erzinjan, Sumpad was transferred to the prison at Erzroum, and severely beaten: One morning he was found dead in his cell, the body bearing marks of poison. He was refused Christian burial by Bishop Aristages. His mother died of grief, and his sweet-heart followed her. Mr. Seklemian was released through the efforts of the British Consul.

My dearest Sumpad, my beloved son, Flower of my heart and light of my sad eyes! The Turk hath snatched thee from my arms, alas! Thou for thy nation wast a sacrifice.

"As wild as a wild cedar is the Turk," Thou saidst; the enemy thy speech o'heard.

The more I think of it, the more I grieve; The wicked one took vengeance for that word.

Hungering and thirsting for Armenian blood, He threw thee into prison. O my dear, And chained thee cruelly; thy pleading prayers The God of the Armenians did not hear.

In Erzroum's dungeon, in a corner flung, Long didst thou pine, and pant for air in vain; And when thou didst yield up thy latest breath Thou, for thy mother, couldst but clasp thy chain.

Oh, let it reach to highest heaven, the voice Of my lament, a mother's sighing breath, And let Armenia's valiant-hearted men Take vengeance for my son's untimely death!

Short was thy life as that of any flower; Soon came the sunset and the daylight's close.

Pass thou to heaven, afar from this sad earth! There from thy sorrows thou shalt find repose.

Thither will come thy sweetheart, and I too, To clasp each other, safe beyond earth's strife.

I curse my fate, but bless thee, O my son, Since for thy country thou didst give thy life.

ALICE STONE BLACKWELL.

ԱՉԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Կիլիկիոյ Կաթողիկոսական ընտան- թեան խնդիրը կրկին ջուրը ինկած կ'ե- թի. որովհետեւ այդ ընտանութեան նա- իսագահելու պաշտօնը տասնմեծ Տ. Սա- Նակ Սրբազան այլ ևս երուսաղէմէ գուրս

ո' և է պաշտօն ընդունել չի պիտի կրնայ եղեր, իբր թէ վանքին մէջ իր աւագ լուսարարապետի յով կարևոր պաշտօնին պարտաւորութիւնները տարւոյն այս ե- ղանակին մէջ բացառիկ ստիպողութիւն մը կը ստանան եղեր:

Պարոյ մէջ երկու աղքատ արկիները իրենց միակ հարստութիւնը կազմող առ- ները ազգին նուիրած են, պայմանաւ որ ցորչափ կենդանի են հոն բնակին: Այս արկիներէ մին մեռած է նոյն օրը, յորում Սարգիս պէյ յանկարծմամբ կը լար առանց որ և է կտակի. և այդ պատ- ճառաւ ալ Եղգաֆի նախարարութիւնը կը գործէ պէյին լուրը գոյքերը՝ յօգուտ արքունի գանձուն: Ահա հոգուով աղքատ հարուստ մը:

«Բազմամէյպի» վերջին պրակին մէջ հետեւեալը կը կարդանք.

Նիւ Երզրէ Ձայն Հայրենեաց ազգային լրագրող իւր վերջին պրակին (թիւ 9) մէջ, երկար քննարկաբար յօդուած մը հրատարակած է. յօդուածագիրն վ. Շա- հէնի, որ ծանօթ է իւր ընտիր երկերով, կը ջատագովէ հայկական դպրութիւն. ու իւր այդ յօդուածի գրութեան շարժա- ութի կը լրացուի Ա. ստորագրութեամբ յօդ- նուածագիր մը այս խօսքերն թէ՛ «Մեր գրականութիւնը Յունարէնէ, Լատինե- րէնէ և Պարսկերէնէ գոյգուած է»:

Օգուտա՞ծ, թէ՛ գողցուած: Et voila justement come on 'crit l'histoire!

Ս. Յակոբայ Որբանոցին մէջ պատըս- պարուած գաւառացի որբերէն ոմանք ինքրազիր մը սուած էին Ս. Պատրիարք հօր, իրենց ծննդավայրը Ղրղոտեան համար և ոմանց այ ազգականներուն կողմէ խնդրուած էր Պատրիարքարանէն ետ դարձնել իրենց որբերը: Այս մասին հարկ եղած քննարկիցը կատարուելով, Յանձնաժողովի երկհոտան նիստին մէջ որոշուեցան այդ կարգի 13 որբեր, որ- ընք յառաջիկայ շաբաթ Իսկէնաէրունի ձամբով պիտի շրջուին իրենց ծննդա- վայրերը:

Պատրիարքարանի նպաստից Յանձ- նաժողովը վերջին նիստին մէջ որոշեր է 100 լիւրա Մուշ, 25՝ Կիւրին, 22՝ Ուր- ֆա, 60՝ Սղերք և 25՝ Տիվրիկ զրկել, ինչպէս նաև մէկ մէկ գումար՝ Արապ- կիր, Երզնկա և Հիւսիմանսուր: Սառն ժողովը ալ որոշեր է՝ պարենի ու սերմի ցորեն խնդրել կայսերական կառավարու- թեանէն՝ գաւառաց կարօտեցող համար:

Աղթամարայ կաթողիկոսութեան հոգ- ղեարարական անխնամ թեմեթուան մէջ լա- տին կրօնաւորք տարածուելը, նպաստ բաշխել և կրօնական պաշտօններ կատա- ըրել սկսեցր են:

Դատական ու կրօնական գործոց նա- խարարն՝ Պատրիարք Հօր հաղորդեր է Սուլթանին մէկ հրամանը, որով դիւ- բութիւններ պիտի ընծայուին՝ եկեղեցի- եաց, վարժարանաց ու վանքերէն շինու- թեան ու նորոգութեան համար: Պատ- ըրիարքարանը այսպիսի 28 հաստատու- թեանց ցուցակն հաղորդեց նախարարին:

Վտնի Առաջնորդական Տեղապահ Ներ- սէս Եպ. Արմենեան, որ հազար թէ՛ 6—7 ամիս կը լրաց որ իր պաշտօնավայր կը գտնուի և ամիսներով Պոլսի մէջ ուշա- ցուա նազանքներով և ունայն առարկու- թիւններով, այժմ իւր հրատարականք տուեր է: Հովիւր էն սազնապալի ժա- մանակ իր հօտը կը թողու. ուր են, Ա- ւետարանի զբաղ հովիւները:

ԴՍՐՁԵԱԼ ԿՈՏՈՐԱՅ

Կ. Պօլսէն զեկտ. 18ին կը հեռագրեն: Հայոց Պատրիարքը հոս լուր ստացած է թէ իսու էր մը թուրքեր և պ՛շըպզուք- քեր շարժի օր Հայոց Բոշաուր(°) գիւ- ղը մասն են յայտնապէս յեղափոխա կաններ փնտնելու նպատակով:

Իրենց այդ խուզարկութիւններու միջոցին սուներ քանդած և այրած են և 250 հոգի ջարդած են, որոնց մէջ կան

կիներ և ման չ'կներ: Պատրիարքը այս խժոճութեան դէմ Սուլթանին բողոքած է, ըսելով թէ՛ 15 օրուան մէջ այս երկրորդ դէպքն է որ կը պատահի:

ՔՐՈՆԻԿ

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆ Ի ԹՈՒՐԻՒՄ

Պերլինի «Լօբալ Անգլիկեր» Պօլսէն եկած լուրի մը համաձայն՝ Սուլթանը իրատէով ընդունած է Գերման Բրօֆ- Բէյլերի կրթական դրութիւնը: Այս կը ցուցնէ թէ Գերմանական ազդեցութիւնը թուրքերու մէջ կ'աճի:

Բրօֆ. Բէյլերի ծրագիրը կը պարու- նակէ՛ ահագին հիւանդանոց մը կցուած բժշկական վարժարանին, որն աւարտելու վրայ է, ուր ուսում պիտի աւանդուր գերմանական համալսարաններու դրու- թիւնով: Հարկ է նաև նախապատրաս- տական մը, ուր 5 տարի գերմանական լեզուի ուսուցումը պարտաւորիչ պիտի ըլլայ Սուլթանին իրատէովը:

Կ. Պօլսէն Դեկտ. 15ին կը հեռագրեն: Նախարարաց ժողովը երկ կ խօսակցու- թեան նիւթ ըրաւ Անգլիայ՝ Ասէնի մէջ անդական ցեղապետները շահելով՝ հա- րաւային Արաբիոյ թուրքական հողը իրեն միացնելու նպատակաւ ըրած ջանքերը պոռնուեցաւ ցեղապետներուն ընծաներ- ուղարկել, որպէս զի իրենց հաւատար- մութիւնը պահեն:

Սուլթանը Համիտի փեսան Մահմուտ Փաշա իր հետ վեր առնելով ուր կնոջ բո- լոր մարգարտեղէններն և գոհարները՝ խոյս տուած է Պօլսէն դէպի Մարսէյլ: Սուլթանը զիմած է Գաղղիոյ Արաբիոյ Գործոց նախարար Տէլքաւէի, որպէս զի Մահմուտ Փաշա Մարսէյլ հասնելուն պէս ձերբակալուի և Պօլսի զրկուի. զի Սուլ- թանը կը խորհէր թէ Մահմուտ փաշա իր դէմ գաւազարութիւն սարքողներէն մին լինի:

ԱՆԳԼՈՒՆ ԵՒ ԹՐԱՆՍԿԱՆԱՆ

Լօրտ Մէթուհէն, որ Մօտէր գետի մօտ իր յաղթութեամբը հռչակ ստացաւ և որուն վրայ Անգլիոյ կը նայէր իբրեւ ջախջախող ոյժ մը Կօնստանուլ, դեկտ. 12ին շարժար յաղթուելով՝ ինքը ջախ- ջախուած ետ մղուեցաւ:

Ճէնըրըլ Բաթալերի պարտութենէն յետոյ այս երկրորդ ու աւելի մեծ պար- տութիւնն Անգլիան իրաքանցումի են- թարկած էր, երբ յանկարծ իր նոյն ընդ- հանուր հրամանատար Ճէնըրըլ Պուլըր հետեւեալը կը հեռագրէր դեկտ. 16ին:

«Յաւելով կը տեղեկագրեմ ձեզ ձա- խողութիւն մը: Ամբողջ զօրութեամբ մեր բանակատեղը երող Տիվրիկէն յառաջ կը շարժէի առսուսն ժամը 4ին:

Թուրքա գետը անցնելու համար եր- կու հուս միայն կայ իրարմէ մէջ մէկ մը- ղուն հեռաւարտութեամբ: Նպատակս էր աստեղմէ մին բա ի անցնել ջ կատով մը կեղզրական ջրկատի օգնութեամբ: Ճէ- նըրըլ Հասթ պէտք է ձախակողմը յար- ձուկէր, Հիւսեարտ ալ ճամբան և Լիթըլ- թըն ասանց երկուքին պիտի օգնէր:

Առաուն կանուխ տեսայ թէ շարժ չկրցաւ զինու զօրութեամբ անջք մը գտնել, հրամայեցի որ ետ քաշուի: Սա- կայն և այնպէս նա քաշաբար յարձակու- մը գործեց և իր յառաջապահ գու զը վախնամ շատ փնտնուցաւ:

Հրամայեցի որ Ճէնըրըլ Հիւսեարտ ևս յարձակի: Իր յառաջապահ վաշտը թօյննայի կայտանը գրաւեց կամուրջին մօտ: Այդ ր պէին լոցի թէ բողոք թըն- դանօթիւն. թուով 16, որ այդ յարձա- կուածի ամար իրենց զրկած էի, չէին գործեր:

Գոլչէլ Լօնի փախուեցաւ թշնամ- լոյն հասնելու աստիճանին դէպի գետը յառաջանալ: Տեսնուեցաւ թէ թշնամիով լեցուն է, որ յանկարծակի սկսաւ սոս- կալի կրակ մ'ընել մեր իններուն վրայ, որոնց բողոք ձերբ սպանուեցան: Թըն- դանօթաձիգները ստիպուած էին իրենց թնդանօթներուն քով մնալ:

Վերջին ճիգեր թափուեցան զաշա- տին թնդանօթները ետ բերելու, սակայն կրակը սոսկալի էր: Երկու հաս միայն կարելի եղաւ գատել:

Ճէնըրըլ Պուլըրի պարտութիւնը եւրօ- պան յարուած գրութեան մը ենթարկած է և Թուրքիան ամեն վայրկեան կապառնայ Աֆղանիստանի սահմանէն Գանաւհարի վրայ քայլել:

Անգլիոյ սակայն իր քաղաքացի և պահեստի զօրքերը գէնքի կանչած է եւ քիչ ժամանակէն իր թրանսլապի բա- նակը 180,000 զօրքի պիտի հասնի: Այս- պիտով նա կը ջանայ ոչ թէ միայն իր օ- բութիւնը ցոյց տալ՝ այլ նաև առաջը ստնել այն ստանացող յեղափոխու- թեան, որ իր թրանսլապի և Օրէնճի աղատ հանրապետութենէն յաղթու' լով անխուսափելի դարձած է Բարեկուսոյ Գլխի գաղթական Պօլսէնը մէջ:

Հապէշիտանի Սէնէլիք թագաւորն ևս սկսած է սպառ արևն գլիք բռնել և կը սուր թէ 200,000 զօրքի զուլս անցած՝ մտադիր է դէպի Սարթուս արշաւել:

Լօրտ Բիշըրը և Լօրտ Բօպըրթս եր- կու նշանաւոր հրամանատարներ հրա- հանգ ստացան հարաւային Աֆրիկէ եր- թալ:

Մինչև հիմա անգլիացիներուն կո- բուսը կը հասնի 6190 հոգի, որոնց 829 միայն սպաննուած են, իսկ մի անհրը վերաւորուած և քերի բռնուած:

ՉՕՐ. ՃՈՒՊԵՐԹԻ ՄԵՅ ԵՍՄԱԿԸ

Չօր. Ճուպերթ Պօլսէնը ընդհա- նուր հրամանատարին, հոկտ. 27ին Պեր- լին Կաղէթիւն գրած նամակէն հետեւ- եալը կը քաղենք:

«96ին Ճէմսընի ախրահաշակ արշա- ւանքէն իմեր մեր կառավարութիւնը հա- մոզուած էր որ անխուս հանգամանքներ Անգլիան պատերազմի պիտի մղէին, որոյ միակ առարկան ըլլալու էր թրանս- վապի հասարակապետութեան ջնջումը: Հաւասարապէս վստահ էինք թէ մենք կը թնդուէն էինք մի միայն մեր անձնա- կան միջոցներուն վրայ, զի թէ և դի- տայինք որ այս պատերազմը բողոք եւրօ- պական պետութիւններուն միաձայն դա- տապարտութեանը պիտի արժանանայ. սակայն երբէք ինքնախաբէութիւնը չու- նեցանք թէ անոնք մեր օգնութեանը պիտի հասնին: Այս պարագաներուն զի- տակից՝ մենք կը թնդանք միայն ինք- զինքնուս, յառաջ տարինք մեր պաշտ- պանութեան միջոցները, նոյն ասան Անգ լիացիները մեր իրական պատրաստու- թիւններու մասին մտածի մէջ թողու- ցինք: Այս նպատակաւ Անգլիական հու- հուհու հանող լրտեսներուն ցուցուցինք մեր Հին թնդանօթները՝ պահելով անոնց աչքէն մեր ունեցած նորագոյն թնդա- նօթները: Եւ հաշիւները շիտակ եւան: Անգլիական հասարակութիւնը հաւատ ընծայեց այդ սխալ տեղեկութիւններուն և հիմա իրենց «Իէպի Փիլէթօրիս» աղա- դակը, 1870ին Փարիզցոյց «Իէպի Պեր- լին» աղադակին կը նմանի:»

ՅԻԼԻՊԵՍՆ ԿԻՉԻՆԵՐԸ

Վերջին պահուս եկած հեռագիր մը գուժեց Ճէնըրըլ Լաութընի մահը: Այս գուժը Ամերիկայի համար անսպասելի էր, ու Ճէնըրըլ Լաութընի նման զին- ուրականի մը կորուստը միշտ գգալի պի- տի ըլլայ, քանի որ նմանները մասի վը- րայ հազար կը համուին Ամերիկեան բա- նակին մէջ:

Ճէնըրըլ Լաութըն իր զօրաբաժնիով Մանիլայի հիւսիսային կողմերը ապրա- տամբներուն կը հետեւէր և արդէն յարձ- անել, երբ Սէնտ Մարթէօ քաղաքի վրայ ըրած իր մէկ յարձակումի ատենը Ամ- ուրիսալայի մէկ նշանաւորներէն՝ սրաէն զարնուելով սպանուեցաւ:

Սպանիայի կղեր մը լուր բերած է թէ Ակուիտանո մինչ 200 հոգով կը փախչէր, ինկորթից ցեղի մարդոցմէ վի- րաւորուած է, որովհետեւ վերջիններս յեղափոխութեան համակիր չէին:

Յրանսայի և Չինաստանի միջև քա- ղաքական գրութիւնը այնքան լարուած է, որ վախ կայ թէ պատերազմի բռնուին:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՓՈՌՈՒՆ ԶԱՐՍԵՓՈՒՆՉԻ

Շնորհակալութեամբ ստացայ 30 տոկար իտարերդցի Պ. Պորտոլի Ելմասեանի և Օր. Թագուհի Մարեանի պատկազրութեան հանդիսին առթիւ, որ տեղի ունեցաւ Լինքոլն մէջ, ամսոյ 9ին:

Այդ գումարն հանգանակեցի հարսնեւորներէն, ըստ սովորութեան «փեսայ հագուեցնելու» մրցման մէջ:

Նուիրատուաց հաճութեամբ՝ այդ գումարէն § 8 յատկացուցի հոս գտնուող յայտ կարտ ընտանիքի մը, իսկ մնացեալ § 12ը փոխ տուի տառապող և զրկեալ հայ Տիկինի մը, վերջինս՝ որ երբ ունի զրկուելու համար՝ վերադարձնելու պայմանաւ:

Փափաքելի է որ այսպիսի նախանձելի մրցումներ շատնան. խմելիքներու և այլ շատ ծախսերուն... փոխանան ալ տեսնենք:

Աղօթարար ՄԱՇԹՈՑ ՎԱՐԴԱՊԵՏ

Նիւ ԵՈՐԿի ազատ լսարանի ժողովները կանոնաւոր կերպով կը շարունակուին, իրար ետև յաջորդաբար խօսեցան Պ. Մարտիան «Անհատի նկարագրի» Պ. Գ. Թագուհեան «Չինուորական կրթութեան մասին» ժողովուրդ այժմ խառն բազմութեամբ կը յամայնէ լսարան ու գոչ կը մեկնին Անցեալ կիրակի հրաւիրուած էր խօսելու վանեցի երկամասրդ Պ. Մովսէս Պապաստարեան, որն այժմ կուսանի Գոյովպիս համալսարան՝ պատմութեան և գրականութեան ճիւղեր իր նիւթն էր «Նարոյնի Պատարանի կեանքը», մաքուր ու կակիկ հայերէնով ու սահուն ոճով կենդանի կերպով պատկերացուց այն կեանքը, որով շատերը հետաքրքրուած են: Ատենուհետ սուր ու ընդունակ միտք մը ցոյց տուաւ, որպէս ուսանող՝ քաղցր յոյսեր կը տածենք իւր ապագայի մասին: Ժողովուրդի բուն ծախսերը իրենց խորին գոհունակութեան արտայայտութիւնն էին:

ԲՐՈՎԻՏԷՆՍԷՆ մեզ կը գրեն՝ «Գեկ. 16ի երկրայան Մէլքի կնք. Երկուսու Գոյէն և Սարգիսի Աղբ. Որբանցի Միւսթեան կողմէն՝ Հայաստանի ջարդերու և արքի վիճակը ներկայացնող ներկայացում մը տրուեցաւ: Հո՞՞ք բազմութիւն մը կար ու սպառութիւնը լաւ էր: Դերասաններէն Պ. Մ. Պալիկեան յաջող դերասանի մը սպառութիւնն էր՝ թողարկեցի կողմէն:

ՄՈՍԿՆԻ Գրադարանի վարչութիւն պաշտօնագիտ կը գրէ, որ «Չայն Հայրենեաց» 14րդ թիւի մէջ Բրովիտէնէն Մ. Մամուրեանի զրկուած նուէրէն իրենց մասնակցութիւնը մոռցուած էր՝ մեր թղթակցի կողմէն:

Ցաօք սրտի կը ծանուցանենք թէ՛ այն չենք, որուն մէջ «Հայրենիք» կը հրատարակուէր, յանկարծ երկ կ'ըլեր այրեցաւ: Վարչութիւնն ամեն միջոց ձեռք առած է կարելի եղածին շարժումս իրենց նորէն հրատարակել, այդ մասին մեր բաժանորդները կրնան ապահով ըլլալ: «Հայրենիք» ապահովագրուած էր՝ «ՀԱՅՐԵՆԻՔ»-ի վԱՐՉՈՒԹԻՒՆ:

Ա.Զ.Դ.

Քաղաքիս Հայկազեան կոմունն որոշած է շքեղ հանդէս մը տալ Դեկտ. 23 Ետեալ երկուս, ուր բացի այլ կայլ ներկայացուցներէ ու զինուորական ցոյցերէ, Սպանո-Ամերիկեան պատերազմի ներկայացուցներ ալ պիտի տրուին:

Ի Դիմաց Հայկազեան կոմունի վԱՐՉՈՒԹԻՒՆ:

Ա.Զ.Դ.

Պատիւ ունիմ ծանուցանել թէ քրիստոսի առթիւ գեղեցիկ թրքական ապրանք թնիթ ընծայի յարմար, այսինքն խալի, թէն յալը քըվըր, և փրանս քըվըր. կոշիկ, լօգուտ, կիւլ ետզի և ուրիշ շատ անոակ ապրանքներ, որ շատ աժան գնով կուգեմ ծախել: Նամակով ուղղակի ունի C. O. D. ուղղարկեմ:

Հասցէս — Ետեալ թ. Իլպէկ 38 Liberty St, Worcester, Mass.

Ա.Զ.Դ.

Կը ծանուցանենք Հայ հասարակութեան թէ՛ Պոսթոնի թայլը փողոցին մէջ նոր խանութ մը բացած ենք, ուր կը վաճառուին ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԸՆՏԻՐ ՆՊԱՐԵՂՆԵՐ ՉԱՓԱԻՈՐ ԳՆԵՐՈՎ:

Յանձնարարութիւնը կը կատարուին փութով և խնամով:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԱՄՈՒԷԼԵԱՆ ԱՐԱՄ ԱՍԲԱՆԱԶ

Մեր Հասցէն է Tyler Grocery Co. 113 Tyler St., Boston Mass.

ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԱՏ ԼՍԱՐԱՆ ՆԻՒ ԵՈՐԿԻ Հայկական Ազատ Լսարանի Ժողովը տեղի կունենայ յառաջիկայ կիրակի (23 դեկտեմբ.) Elks Hall ժողովարանին մէջ թիւ 19 W. 27րդ փողոց Պրոսպեկտի մէջ: Ժողովը կը բացուի ճիշդ ժամը 8ին և կը փակուի 10ին:

Լսարանի մէջ պիտի խօսի Պ. Յ. Սարգսեան, նիւթը՝ «Շարժումն սոցալ-արտիստիկները և հայ որբերը»: Վիճարարութեան նիւթ պիտի ըլլայ «Գրէ՛ թէ սո՛ր»:

ԼՍԱՐԱՆԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՏՕՆԱՄԲՐՈՒԹԻՒՆ

Ա.Զ.Գ.ՍԻՆԻ ՆԻ ԿՐՈՆԱԿԱՆ

Քրիստոսի Յննդեան տօնատօնութիւնը և Ամերիկայի Հայերէն անդրանիկ վարժարանի առաջին վեցամսեայ մրցանակատար խալիկեան հանդէսը միասին տեղի պիտի ունենան յառաջիկայ Դեկտ. 23ի երկուսին Ուէսթ Հոպոքենի Հայոց Միացեալ Հաստատութեան կեդրոնատարանին մէջ, թիւ 347 Clinton Ave. West Hoboken, N. J.: Սոյն հանդէսին բոլոր տօնատօնութիւնը, շատ քիչ բացառութեամբ, տեղի պիտի ունենան Ուէսթ Հոպոքենի տիկնանց, օրինորդաց և աղայոց կողմանէ: Տիկնանց և օրինորդաց կարգադէր մասնախումբը ջանք չէ իւր-նայաձ հանդէսի յաջողութեան առթիւ:

Ըստ աւուր պատշաճի ազգային հոգեբույսի շարահաններու, տաղերու և երգերու երգերու, ինչպէս նաև բաժնետիրութեան ճորտ յայտագիր մը պատրաստուած է: Հաւանականաբար ութը կտոր հին ու նոր, հայրենական ու տեղային նուագարաններ պիտի ընկերակցին երգեցողութեան: Ըստ 150 կտոր մը բացանակներ և Յննդեան զեղեցիկ ու սիրուն նուէրներ պիտի բաշխուին Ուէսթ Հոպոքենի մանկանց:

Ջերմ սիրով հրաւեր կը կարգանք ամեն ազգայնաց, մանաւանդ Ուէսթ Հոպոքենի հայ ծնողաց, որ հաճին իրենց ներկայութեամբ պատուել այն հանդէսը, իրախուսել Հայ վարժարանն ու անդ յաճախող երկուս հայ մանկուհի, և քաջաբերել Ուէսթ Հոպոքենի հայուհիք:

Մուտքը ձրի է:

Ի Դիմաց կարգադէր Մասնախումբի Բարտուղար ԱՄՈՒՆԱԿՈՎ Օ՛ր. ԳՍԱՐԻՆԷԼԵԱՆ ՏԻԿ. ՏԻՐԱՏՈՒՐԵԱՆ

Ա.Զ.Դ.

Առ Ուէսթ Հոպոքենի Ազգային վիճակիս բարեխնամ Առաջնորդ Գեր. Սարաճեան Սրբազան Հօր հրամանաւ, անցեալ շաբթու կատարեցինք Ուէսթ Հոպոքենի ազգայնաց մարդահամարը, որքան որ մեզ առաջնորդող անձը ծանօթ էր հայ ընտանեաց բնակարաններուն:

Ներկայիս կուգանք ծանուցանել որ եթէ կան ձերզի Սիթիի, Ուէսթ Հոպոքենի, Երևանի շէրի կողմերը բնակող ընտանեօք կամ առանց ընտանիքի ազգայիններ, որք Հայաստ. Ս. Եկեղեցւոյ զաւակ լինելով՝ մոռցուած են արձանագրուել եկեղեցւոյ Մարդահամարի Տօմարին մէջ, հաճին իրենց անուններն ու հասցէները անմիջապէս հաղորդել մեզ, որ առաջին պատահանութեամբ երթանք արձանագրելու իրենց անուններն:

ԽՍ.Դ. ՎԱՐԴԱՊԵՏ

Թիմակալ Հովիւ Նիւ Ետրքի Մեր Հասցէն է՝ 340 W. 31st St., N. Y. City.

ՈՒՇԱԿՐՈՒԹԻՒՆ!

Քրիստոմբի առթիւ նուիրատուութեան կամ անձնական գործածութեան համար տանկական, շինական և ճարտարական անընդարձութիւններ և այլն կարգի բաներ ունենք, այսինքն տանկական խալիներ, սեղանի և փրանսյէ ծածկոցներ, ալազ և անընդարձուած մետաքսայ թաշկինակներ՝ կիներու և էրիկ մարդոց համար, շինական լաւ թէյի թախաններ՝ իւրաքանչիւր հինգ կտորէ բաղկացեալ, ճարտարական փողոսկրեայ հովազներ, աստի-անընդարձուած փապուտ, վարդի իւզ ընտիր տեսակէն, ու ամեն կարգի ապրանքներ, որոնք յարմար են ընծայի և գործածութեան համար:

Այս գործոյն մէջ մեր տանեկու տարուան ունեցած փորձառութիւնը կ'երաշխարհէ մեր ապրանքի ճաշակուոր և արժէքին ալ չափաւոր ըլլալը: Մեր հասցէն է՝ Հաճի կարգադէր Ա. Հարոյնեան, 98 Common St., Lawrence Mass. 2-3

ԿԱՂԱՆԴՁԵՔ

Ձեր եղբարց, քոյրերուն, նշանաներուն, սիրուհեաց և ամեն կարգի բարեկամաց՝ Յննդեան և Նոր Տարուայ առթիւ նուէր տալու ամենէն գեղեցիկ, պատշաճ, խիստ գնահատելի և Անգլիկերէն սարկելու անհրաժեշտ առարկաներ են մեր նոր լոյս անոս:

Ա. Ռ. Չ. Բ. Ն. Ա. Մ. Ե. Բ. Կ. Ե. Ա. Ե.

ԲԱՌԱՐԱՆ

ԱՆԳԼԻԵՐԷՆԷ ՀԱՅԵՐԷՆ Գրին և 250 Տոյար ԻՆՔՆՈՒՍՈՒՑԻՉ ԱՆԳԼ. ԼԵԶՈՒԻ Ընդալ ճակորէն տարածուած Գրին և § 2.00 Դեկտ. 14ն մինչև 31 § 1.50

ՊԻՏԱՆԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

Գրին և § 50 սէնթ. Ամեն մէկ բառարանի և ինքնուսուցչի հետ մէկ մէկ օրինակ Պիտանի Գրանի Լիքներ նուէր կը տրուի: Դիմել առ Պ. Ռ. Թորոսեան 564 Clinton Ave. West Hoboken, N. J. Կըծախուի նաև խմբագրութեան քով:

ՆՊԱՐԱՎԱԶԱՍՈՒՄ

Ս. Տամպուրաճեան 509 2րդ Ալլիւի. 28 և 29րդ փողոցի մէջ Նիւ Ետրք

Տեղական և արևելեան բազմատեսակ նպարեղէններ և մըր-գեղէններ:

Եղանակիս համաձայն թարմ բանջարեղէններ և պտուղներ, առօրեայ թարմ միս, հայկական պանիրը համաւեր 15 Կ., մեծաքանակ գնողաց համար 13½ սէնթ. Ուստի պատուական պղնձուրը և ծեծածը փաւընտ 3 սէնթ, մեծաքանակ գնողաց համար 2½ սէնթ. Բիթապտուղ (դէյթուս) փաւընտ 10 Կ. շատ գնողներուն համար 9 Կ.: կանաչ դէյթուս, որթատրեկ (եպիլոս) ընտիր կերկուս, Ամաիսի պամեա՝ մեծաքանակ գնողաց համար փաւընտ 28 սէնթ, հայկական դէյթուսի իւզ Այնթապ հալվաթի (ընտիր տեսակով), լոխուժ (ամեն տեսակով), Քըսթըն, լէպլէպու (տեսակներով), ուսպ (աղցուած կամ առանց աղցուելու), սուժոսի, սիսառ, Պոլտոյ խաշար պանիր, քիմիօն, անտոն, շահրի (փաւընտ 5 սէնթ), մաքաբօնի փաւընտ 6 սէնթ, մեծ քէն սալա, մեծաքանակ գնողաց համար հասը 25 Կ., մէկ փաւընտ 7 սէնթ, քեն տօմաթէն հասը 7 սէնթ, չոր ծիրան, սալար, չամիչ (տեսակներով), սապօն և խուկի: Նամակով եղած յանձնարարութիւնները փութով և քիչ վարձքով կը կատարենք մեր անձնական կառքերով:

ՄԱՍԻՍ

ՆՊԱՐԱՎԱԶԱՍՈՒ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ Ի ՊՈՍՏՕՆ

Ներսէս Մ. Թոմասեան և Մերկեր Մ. Թոմասեան կը ծանուցանենք թէ մեր 20½ Hudson փողոցի նպարեղէնի խանութը փոխարեւ էնք թիւ 38. այն փողոցի մէջ միանալով Յովհաննէս Բարբառեանի հետ այժմ շատ աւելի զիւրութիւններ ունենք ուղղակի Տանկաստանէն ապրանքներ բերելու և կը վաճառենք նաև մեծաքանակ (Հոյսել):

Մեր քով կը վաճառուին Ուսթրի պատուական պղնձուրը, ծեծած և կրկուտ, ոսպ՝ Տանկաստան աղցուած, պամեա, սիսառ, աղի ետրոսի, խայսերի պատարայ տանկաստանի մաքուր ձեթ, աղը դնելու թարմ պանիր, սոմաթէն սալաք. խաշար պանիր, ուրիշ շատ մը տեսակներ: Ունենք հիւանդոցի սիկարի թուփ, Կ. Պոլտոյ լոխուժ, լիպկեպի տեսակներով: Ծննդի առթիւ բարեկամներու սարկը յարմար նուէրներ, ուրիշ սեղ չէք կըրնար գտնել, մեծաքանակէնք, կրկուտը և փորոճներ, խաշուէի աչիլիմէն են: Փորձեցէք և գոհ կը մնաք գրիւ ընկերութեան հասցէին:

Massis Grocery Co. 38 Hudson St., Boston Mass.

Ա. Զ. Դ.

Քերտ փողոցի Ս. Բարթոլոմէոս Եկեղեցւոյ մէջ նախագիտ կազմուած Հայկազեան կառուցողական և աւելի հաստատ հիմերու վրայ վերականգնուած ըլլալով՝ իւր մարզութիւններ կը շարունակէ թիւ 498 3րդ Ալլիւ 33 և 34րդ փողոցի մէջտեղ, վերին յարկ, ամեն Ուրբաթ իրիկուներ ժամը 8էն 10:

ԵՐԻՒՇԱՄԵԱՆ ԵՂՔԱՐԲ

Օղի ի և Մասիլիայի Պատաստողներ Սրեկեան օղի և Մասիլիայի անդրանիկ և միակ գործարանը ունինք Մ. Նասանդայ կառավարութեան վաւերացեալ:

Միայն պատուական խաղող է և շամիչէ կը պատաստենք: Մի խմէք օտար և անխորթ խմելիքներ: որ շխառութիւնը իմենցէ հայրենիքը զուտ օղի և մասիլիան, որ խնամքով կը մատակարարենք:

Եթէ որ է հայ մը մանաւանդ հայ ընկերներ կրնան վաւերացնել ամենափոքրիկ խաղողի թիւն մը մեր բնակեաց մէջ, պատաստ ենք իրենց փորձերուն համար բոլոր ծախքեր և 500 սոլար ալ գրուած վճարել:

Ուստի ինչ կրնան ստանալ օղի և մասիլիա 11½ Summer St ըմպելեաց մեծ վաճառատներն:

Ուրիշ քաղաքաց հայեր կրնան գիմել կամ գրիւ ուղղակի մեր գտարանը Abraham Bro's 20-22-24 Back St. Providence R. I

Ա.Զ.Դ.

ԸՆՏԻՐ ՊՈՒԼԿՈՒՄ

Ուստի մէջ երկար տարիներէ ի վեր հաստատուած են մեր յատուկ պոլիպի գործարանը: Սոյն գործին մէջ մեծ վարձառութիւն ունենալով, ամենալաւ ցորենէ կը պատրաստենք ընտիր պոլիպի, որ իր մաքրութեամբ և ուրիշ բոյ յատուկութիւններով՝ անտիփրիններու և ճաշարանակներու գնահատութեան արժանացած է: կը պատրաստենք նաև նոյնպէս ընտիր ծեծած և կրկուտ:

Ուստի ամեն ով որ կուզէ ընտիր և անտիփրին կերակուր ինչպէս պոլիպի և ծեծած ունենայ, թող զիմէ ուղղակի մեզ: Առաջարկենք փութով կը կատարուին: մանրտօման տեղեկութեանց համար պէտք է զիմի հետեալ հասցէին: Ուստի Պոլիպուրի Միացեալ Ընկ. 151 թ. նիւրն սթ. Ուսթրի Մասիլիական տեսակ տեսակ ապրանքներ ալ կը ծախենք:

ՄԱՐԻՔԻՆ ԳԻՆՕ

Վաճառուող անական ամեն կարգի կահ կարտուաց: Հայերու սոյն պատշաճագոյն տեղ չեն կրնար գտնել գնելու, մահճակալ, մեթրիս, սեղան, շնոց, կարպիտ և որ ի կարգին: Հասցէն է՝ MARTIN KEENOW 79 Green St., Albany N. Y.